

ԴԱՐԱՎՈՐ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊՈՒՄ

Ա. Գ. ԴՈՒՆԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանը հայ այն գրողն է, որի մասին շատ ու շատ է գրվել եւ խոսվել, քանզի նրա կյանքն ու գործը դարակազմիկ էին, եւ կատարածը շրջադարձային էր հայ գրականության դարավոր ընթացքի մեջ:

Դեռեւս 19-րդ դարում Խաչատուր Աբովյանը նույնքան հայտնի էր, ինչպես այսօր այն գրական, բանասիրական շրջանակներում, որոնք կապված էին Դորպատի կրթական միջավայրի հետ կամ առնչվում էին Անդրկովկասի ժողովուրդների էթնիկական, մշակութային խնդիրներին: Պահպանված են արժեքավոր հուշեր, որոնց հեղինակները հաճախ օտարերկրացիներ են, եւ այդ արդեն մասունքային արժեք ստացած վկայություններում երեւում է նա՝ եզակի ու հրաշապատում իր նվիրումով դեպի հայ ժողովուրդը, Հայաստանը, նրա անցյալի ծեռքերումների գիտակցումով, ներկայի ու ապագայի խնդիրներով մտահոգ:

Խ. Աբովյանի կյանքում բախտորոշ դեր խաղացած Ֆրիդրիխ Պարրոտը նրան բնորոշում է որպես հայերեն, ռուսերեն, թաթարերեն, պարսկերեն լեզուների գիտակ եւ բացառիկ առաջին՝ սակավապետ, գործունյա, զուսպ, գիտության նկատմամբ ունեցած անսահման ծարավով: Արարատի վերելքի պահերին նա չի կորցնում իր ոգու արիությունը, ցուցաբերում է հիացմունքի արժանի խիզախություն ու տոկունություն:

Ըստ օտարերկրացիների՝ Աբովյանը եզակի հանրագիտակ մի երեւոյթ էր ողջ Անդրկովկասում եւ նրա մասին գիտեին շատերը, նրա անունը պատվի եւ ակնածության պետք է արժանանար նաեւ Գերմանիայում:

Խ. Աբովյանի գրական ժառանգության պսակը «Վերք Հայաստանի» վեպն է, որը իր հրատարակման օրից մինչեւ այսօր արժանացել է ամենատարբեր, հաճախ հակամետ գնահատականների: Մեր գրականության մեծերի գերակշիռ մասն անդրադարձել է գրական այդ երեւոյթին եւ մեկնել այն տարբեր դիտակետերից:

Մենք փորձում ենք «Վերք Հայաստանին» մեկնել երկու կտրվածքով՝ հայ միջնադարյան գրական ավանդների շարունակություն եւ բանավոր ավանդության փոխանցում:

«Վերքը» գրելիս Աբովյանը քաջածանոթ էր անտիկ գրականությանը, Վերածննդի մեծերի երկերին, եվրոպական գրականության միջնադարյան ճանաչողներին: Հոմերոսից մինչեւ Գյոթե, Վերգիլից մինչեւ Լեսսինգ:

Աբովյանը քաջ տիրապետում էր արքայական գրաբարին, ծանոթ էր հայ հին եւ միջնադարյան մատենագրության զխավոր ծեռքերումներին, գիտեր, որ նշանավորները երբեք չեն սահմանափակվել կրթական ազգային շրջանակների մեջ եւ պնդվել են քաղաքակրթության առաջընթացին: Ահա ազգային մի ավանդ, որ ամենօրյա թելադիր գաղափար էր նրա հոգում եւ մտքում: Ժամանակակիցների համար անհավատալի թվացող հրաշքի օրենքով նա հայտնվում է Դորպատում, վեց տարի եռանդուն ուսանում, լայնացնում մտահոգիանը, ամբարում հնարավորին խորը գիտելիքներ եւ հավատով վերադառնում հայրենիք:

Աբովյանի «Վերքի» ընթերցումը բացահայտում է հեղինակի ծրագրերի ուղղվածությունը: Այս գիրքը հնարավոր չէ ընթերցել սովորական վեպի կանոններով, այն ունի խնդիրների բեռնվածության այնպիսի ճնշում, որին սովորական վեպը չէր կարող դիմանալ ու տարողունակ լինել: Վեպը իր շատ հատվածներում առնչվում է հայ ժողովրդի հին մտածողությանը՝ չնայած այն նորություն է իր ձևի մեջ եւ գրվել է հնից նորին գնալու ազդարարված միտումով:

Ինչու՞ հինը այդքան շատ է այս վեպում: Խ. Աբովյանը հայ մտավոր զարգացման շարունակությունն է ապահովում, դեմքով շրջվելով դեպի Եվրոպա, նա իր ժողովրդին նույնպես կամենում է դնել այդ շրջադարձի մեջ, սակայն մարգարեորեն գիտակցում է, թե այդ դիմափոխումը միայն կարող է լինել ազգային ավանդներից լավագույնների պահպանման միջոցով: Աբովյանը խորապես քրիստոնյա է եւ հայ քրիստոնեական գրական ավանդների կրողը:

«Վերքում» բոլորովին նոր ձևով են քննված քրիստոնեական հավատի եւ հավատացյալի փոխհարաբերությունները, եկեղեցու ծեսերի եւ հայ մարդու ընկալումները դեպի այդ արարողությունները: Ուշադիր կարդացողը կհասկանա, որ հեղինակի մարդասիրական իդեալը քրիստոնեական հումանիզմի սահմաններում է, եւ այս առումով՝ նա ծայնակցում է միջնադարի հայ մեծերին:

Ժամանակի ու ազգային ոգու խաչածելումը «Վերքում» շարունակ հենվում է դարավոր ավանդույթի

փոխանցման մտահոգությամբ: Աբովյանի վեպից երեւում է, որ քաղաքակրթությունը ժամանակ առ ժամանակ փոխում է իր կիզակետերը, չքանում են ազգեր, անհետանում են մշակույթներ, առաջանում են անցյալը խորհրդանշող հանելուկները, հեղինակը իր վեպով կանխում է իր ժողովրդի ավանդույթի վերացումը, նոր շունչ է հաղորդում դարերի շղթայի կապող օղակին, որ այն չթուլանա եւ, աստված մի արասցե, չկտրվի:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» միջոցով հեղինակը կրկնում է Հայկազյան եւ Արշակունի թագավորական գերդաստանների հերոսական դրվագների կարեւոր պահերը, ծանոթ է Ազաթանգեղոսին, որի երկի երկու կարեւոր դեմքերը՝ Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ Մեծը, քրիստոնեության առաջին կրողներն են նրա համար, յուրացրել է եղիշեի ոսկեդեմիկ մատյանի պատգամները եւ Վարդանին, այսինքն՝ Վարդան Մամիկոնյանին, դիտում է ազգի ոգեշնչման հավերժական օրինակ: Նա հիշում է Բագրատունիներին եւ երկար խոսում է Անի մայրաքաղաքի վաղեմի փառքի մասին:

Խ. Աբովյանի վեպը ողբ է, հեղինակը ծանոթ է պատմահոր ողբին, սակայն իր կատարման ձևի մեջ այն ավելի շուտ հիշեցնում է 11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցու պատմություն-ողբը, հատկապես շատ հոգեհարազատ են Անի քաղաքի նկարագրությունները Լաստիվերցու՝ եւ Խ. Աբովյանի երկերում: Աղասին՝ վեպի կենտրոնական դեմքը, հեղինակի գաղափարախոսը, հիացած է Անիի ավերակների պերճախոս տեսքից: Անիի սրբատաշ տաճարները, հսկա բերդը վկայում են երբեմնի «գոռոգ» քաղաքի փարթաւության եւ ճոխության մասին: Նա էլ Արիստակես Լաստիվերցու նման Անիի ավերվելը կապում է աստվածային պատգամներից շեղվելու հետ եւ խոսում Հովհաննես Երզնկացու անեծքի մասին: Սակայն կարեւորը՝ նկարագրվածից հետո եկող եզրահանգումն է: Հայը պետք է մնա իր սուրբ հողում, պահպանի իր թագավորների գերեզմանները, իր եկեղեցիները գողի ու ավազակի ասպատակումից եւ այդ բարեբեր երկրում, ուր ջուրն առատ է, տները լի, դաշտը լայնածավալ, վերստին պայծառացնի թագավորական հին մայրաքաղաքը:

Հայ միջնադարյան գրչագրերին ծանոթ Խաչատուր Աբովյանն իր գլուխգործոցի մեջ հաճախ է հետեւում հին տաղասացների ոճական ձևերին, եւ դա երեւում է նրա չափածո ողբերում, որոնք ավելի շատ արեւելյան ուղղվածություն ունեն: «Վերքում» եղած ողբերը բանահյուսական եւ միջնադարյան տաղասացության մի ուրույն խառնուրդ են: Նրանց որոշ հատվածներ հիշեցնում են հայ ժողովրդական սգերգերը, իսկ որոշ հատվածներ՝ տաղասացների համանման գործերը, ինչպես, օրինակ, Մկրտիչ Նաղաշի «Մեծեցյալների վրա ասված ողբերը»:

Հետեւելով ազգային ավանդույթին՝ Աբովյանն իր երկում քարոզում է քրիստոնեական հումանիզմին հատուկ չափավորությունն ու անընչասիրությունը, սակայն ողբում է իրական կյանքի հնարավոր տեւողական սահմանների անժամանակ խախտվելու համար:

*Ա՛յ աղամորդի, տես քո վերջն էս ա,
Էստեղ էլ կային նորահարս, փեսա,
Էստեղ էլ կային ծնող, հրեխա,
Հարուստ, մեծատուն, իշխան, համեշա:
Բայց ու՛ր են նրանք, հողի հավասար...
Աշխարհ կործանվել, ազգեր փչացել,
Գազան բուն դրել, ավազակ բնակել...*

Հայկական մտածողության ավանդական բարոյագիտական սահմաններում շատ հուզիչ են ծնող-երեխա փոխհարաբերությունները, որոնք ավանդույթով խիստ պարտավորեցնող են երկուստեք:

Խ. Աբովյանի «Վերքը» ծնողասիրության ու ոգեւիրության մի ինքնատիպ ասք է, որի տարբեր էջեր մանրամասն հիմնավորում են այդ երեւոյթի բարոյահոգեբանական կողմերը: Հայերը հյուրասեր են, տարաշխարհիկ մարդկանց ոչ միայն հանդուրժում են, այլեւ ընդունում են գիրկընդբաց: Հայ երեխան այդ ուշագրավ գիծը «Վերքի» մեջ պատկերված է շատ տպավորիչ մանրամասներով: Կյանքը անցողիկ է՝ իր աշխարհային ու մարմնական հաճույքներով, դրա համար էլ պետք է լիասիրտ ապրել՝ ուտել, խմել, քեֆ անել, «իրար թասիք քաշել», «իրար արեւով խնդալ», որպեսզի մահվանից հետո ողորմի ստանալու իրավունք ունենան: Այս հոգեբանության մեջ կա նաեւ անդրաշխարհի հոգսը՝ լավություն անողը, լավություն էլտեսնի, վատություն անողը՝ վատություն:

Այս պատգամներն են հնչում նաեւ 17-րդ դարի վերջի եւ 18-րդ դարի առաջին քառորդի աշխարհիկ տաղասաց Նաղաշ Հովնաթանի՝ կենսասերի խնջույքի եւ ուրախության երգերում:

1 Ժամանակակիցները Աբովյանի մասին, Երևան, 1941, էջ 15:

2 Նույն տեղում, էջ 32:

3 Այդ մասին մանրամասն տե՛ս ակամավոր արույանագետ Պիոն Հակոբյանի «Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի սրիդձագործական պարունությունը, Եր., 1955, Խաչատուր Աբովյան, կյանք, գործը, ժամանակը (1819-1836), Եր. 1967 և այլ աշխատություններում: Խ. Աբովյանի սրիդձագործության ժողովրդական ակունքներին հատուկ հետազոտություն է նվիրել հայ բանագիտության երախտավոր Արամ Ղանալանյանը:

1 Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971, էջ 98:

2 Խաչատուր Աբովյան, Ընդիր երկեր, հ. 1, 1939, էջ 186-191:

3 Տե՛ս Ներսես Ընդիրապու նույնանունն հրապարակ «Որ Եղիսիոյ» պոեմում, Երևան, 1973, էջ 132-133:

4 Տե՛ս, Մկրտիչ Նաղաշ, Ոստանասիրություն եւ բնագրեր, Երևան, 1965:

5 Աբովյանի բնագրի հրատարակչական ուղղագրությունը փոքր - չին փոխում են: Խ. Աբովյան, Ընդիր երկեր, հ. 1, էջ 65:

6 Նույն տեղում, էջ 33:

Այսօր սեղաններ բերե՛ք, բացե՛ք,
կերե՛ք, խմե՛ք, ուրախացե՛ք,
Պարելով ծափ տուր եւ խաղացե՛ք...
Այլ կե՛ր, խմե՛ հետ ընկերաց...
Գալ տարի ո՛վ սաղ, ո՛վ մեռած՝...

Թամամ աշխարհ պըտուտ էկա, չը թողի Չաբաշ, մազանի,
Չը տեսա քու դիդարի պես՝ դուն դիպիւնեն բաշ, մազանի...
Ակիսուս վուր շուտով միռիլ է, լուսըն քու ծնողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիզի պես մաղաշ, մազանի՛:

Շատ տարողունակ խնդիրներ են «Վերք Յայաստանի» վեպի բանագիտական եւ ազգագրական կտրվածքները:

Լեզվի, կրոնի հարցերը շաղախվում են այս խնդիրների հետ, եւ Աբովյանը խստորեն զգուշացնում է՝ չմոռանալ ազգային լեզուն, տասը լեզու սովորել, բայց ազգային լեզուն ու հավատը պինդ պահել¹: Սա արդեն այն գերագույն ու սրբազան պատգամն է, որը, որպես ավանդույթ, ամեն մի հայ սերունդ պետք է փոխանցի մյուսին: Սակայն գրողը չի մոռանում նաեւ հիշեցնել, որ հայերը պետք է հոգան աշխարհում իրենց տեղն ու դերն ունենալու հարցը, հասցեն իրենց գրականությունը միջազգային ճանաչման, որպեսզի հայ գրողների գրքերը թարգմանվեն օտար լեզուներով²:

Բանահյուսական գրական տեսակներից ամենաակնառու ծելով վեպում երեւում են իմաստալից առած-ասացվածքները. մեր առածանին ուղղակի սփռված է վեպի էջերի մեջ, որոշ հատվածներում դրանք ակնհայտ կուտակված են: Բերենք մի շարք դրանցից. «Մարդ պետք է ինքն աշխատի, որ կերածը հալալ լինի» (էջ 23)³, «Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց շուտ արեք, հոտը գնաց» (էջ 35), «Աշխարհը դմակ, մարդը դանակ», «Դեղ ունես, քո գլխին արա», «Դրուստ խոսողի փափախը ծակ կլինի» (էջ 37), «Մեկ մկան բուռը, որ հազար թուման տային, կառներ, մեջը կմտներ» (էջ 41), «Առանց հիմքի տուն չի շինվի», «Առանց կրակի հաց չի թխվի», «Խմորն առանց թթվածորի չի ուռչի», «Ծառն իրեն- իրեն ցախ չի դառնա», «Զօգտագործված թուրը կծանգոտվի», «Խոնավ տեղի ցորենը կբորբոսնի», «Շաբաթով քաղցած մարդուն միս չեն դառեցնի», «Ցուրտը տարած տեղը կրակին դեմ չեն անի» (էջ 75), «Աղոթքն իր տեղը, թուրն իր» (էջ 99) եւ այլն. եւ այլն:

«Վերք Յայաստանի» վեպում շատ զգալի են հեքիաթին հատուկ պոետիկայի դրսեւորումները:

Աղասու կերպարը հիշեցնում է հրաշապատում հերոսական հեքիաթների կերպարներին՝ գեղեցիկ, մարդու ուշքը գնալու աստիճանի, քաջ, մարդու հիացնումը շարժելու չափ անձնվեր, միայն, ավա-դ, ոչ անմախ: Վեպի ավարտին Աղասու հեքիաթային սլացքը իջնում է մահկանացուի ճակատագրական իրատեսական հարթության վրա: Հեքիաթային գեղեցկուհու գծերով է օժտված Թագուհին, որը բոլորովին էլ Աղասու սիրեցյալը չէ, այլ ընդամենը համագյուղացին: Թագուհին հեքիաթի չքնաղ գեղեցկուհիներից է, որի շլացուցիչ տեսքից ճշում ու ճախրում են երկնքի հավքերը, փթում ու ծաղկում վարդերը, բլբուլը նրա տեսքից մոռանում էր իր վարդին, նա ոգեղեն էր եւ նման երկնային հրեշտակներին⁴: Եվ նույն հրաշապատում հեքիաթի պատկերներով էլ ներկայացվում են Թագուհուն առեւանգել ցանկացող սարդարի ֆառաշները՝ հազար գլխանի դեւեր, կրճտացնող ատամներով, բոց ու կրակ արծակող երախներով⁵:

Հայ կանայք նույնպես պատկերված են բանահյուսական սրբագրմամբ՝ բոլորը գեղեցիկ, բոլորը հեզ, բոլորը շնորհալի, իրենց ամուսիններին նվիրված ու սիրելի: Եթե նվիրումի չափ կա, ապա այդ չափը Աղասու կնոջ Նազլուի անափ նվիրվածությունն ու հեզությունն է:

Բանահյուս ասացողների նման Աբովյանը վեպի սյուժետային ընթացքին հյուսել է իր խոհերը, մեկնաբանությունները, հաճախ օգտագործել ժողովրդական ընկալման համար սովորական դարձած բառակուտակումներն ու կրկնակները:

Երբ գրված էր «Վերքը», դեռեւս հրապարակված չէր Սայաթ-Նովային նվիրված Գեւորգ Ախվերդյանի գիրքը⁶, սակայն բանահյուսությունը շաղկապում է երկու հեղինակներին՝ որպես ազգային ավանդույթի կրողների: Իբրեւ եզակիության երեւույթ՝ հայ ժողովրդական բանահյուսության մեջ կտրիճը կամ գեղեցկուհին համարվում են բացառիկ ծնունդ, երկրորդ նրանց նման աշխարհում չեն ծնվել: Այս համեմատությունը անում է Աբովյանը Աղասու համար⁷, Սայաթ-Նովան՝ իր գոգալի.

А. Г. ДОЛУХАНИЯН. - ПЕРЕДАЧА НАЦИОНАЛЬНЫХ ТРАДИЦИЙ В РОМАНЕ

Х. АБОВЯНА „Раны Армении“, - Феномен Х. Абовяна выявляется сразу же после издания романа. Уникальность произведения заключается в том, что в нем собраны все передовые традиции армянского народа, которые в сознании нации должны иметь постыдность.

Эти традиции обеспечат солидарность нации и выживание на долгие столетия. Поэтому, несмотря на языковые трудности, основанные на фольклорном мышлении, роман Абовяна всегда современен.

1 Նաղաշ Հովնարան, Տաղեր, Երևան, 1983, էջ 87:

2 Նույն փնդում, էջ 80:

3 Խ. Աբովյան, Ընդիր երկեր, հ. 1, էջ 81:

4 Նույն փնդում:

5 Առած - ասացվածքների էջերը նշվում են ըստ «Վերքի» վերահիշյալ հրապարակության:

6 Նույն փնդում, էջ 52-53:

7 Նույն փնդում, էջ 55:

8 Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852:

9 Խ. Աբովյան, Ընդիր երկեր, հ. 1, էջ 48:

8 Սայաթ-Նովա, Հայերեն - վրացերեն... խաղերի ժողովարու, Երևան, 1963 էջ 51: